

ՍԻԼՎԱ ԿԱԿՈՒՏԻԿՅԱՆԻ «ՉԵՄ ԿԱՐՈՂ ԼՈՒԷԼ»

ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅԱՆ

ԼԵԶՈՒՆ

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

Բանասիր. գիտ. դոկտոր

ash.galstyan@mail.ru

ԷՄԻՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՀՊՄՀ հայցորդ. Երևանի հ. 108 միջն. դպրոցի հայոց լեզվի
և գրականության ուսուցիչ

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-26

Համառոտագիր

Սիլվա Կապուտիկյանի «Չեմ կարող լուել» հրապարակախոսությունը հոդվածների, հեռուստաելույթների և հարցազրույցների շարք է, որում հեղինակը ներկայացնում է իր մտորումները արժանավայել ներկա ու ապագա ունենալու մասին:

Մեր նպատակը, անշուշտ, բանաստեղծուհու ապրած ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական իրադրության վերլուծությունը, երևույթներին նախորդող և հաջորդող իրադարձությունների սոսկ նկարագրությունը չէ: Շահեկան է համա-ժամանակյա դիտակետով վեր հանել հրապարակախոսական ոճին հատուկ կառույցների և միավորների լեզվական բնութագրիչները, իրավիճակների նկարագրության լեզվական տարրերը: Այդ առումով հետաքրքրական իրողություններ են դրսևորվում նաև բառային կազմում:

Հոդվածում անդրադարձ է կատարվում հրապարակագրական նյութի կառուցվածքին, հատուկ անունների թեմատիկ դրսևորումներին, այլ ոճերի տարրերի առկայությանը: Վեր են հանվում Ս. Կապուտիկյանի հրապարակախոսության ոճի լեզվական հիմքերը, պատկերավորման և արտահայտչական միջոցները:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ Սիլվա Կապուտիկյան, հրապարակախոսություն, տեքստ, ոճ, բառային կազմ, բայերի կուտակում, փոխաբերություն, թևավոր խոսք:

**THE LANGUAGE OF SILVA KAPUTIKYAN'S "I CANNOT
REMAIN SILENT" COLLECTION OF PUBLIC SPEECHES**

ASHOT GALSTYAN

Doctor of Philological Sciences

ash.galstyan@mail.ru

EMIN MALKHASYAN

Armenian Language and Literature Teacher,

Yerevan Secondary School no 108

ABSTRACT

Silva Kaputikyan's collection of public speeches entitled "I Cannot Remain Silent" comprises articles, TV appearances and interviews, where the author presents her reflections on having a present and a future with dignity.

Our goal is certainly neither producing an analysis of the socio-political situation of the period the poet lived nor the mere description of the events preceding and following the various developments. It is useful to highlight the linguistic characteristics of structures and units specific to the public speaking style, the linguistic elements of descriptions of situations from a contemporaneous point of view. From that perspective, interesting features and characteristics can also be distinguished in vocabulary.

The article reflects on the structure of the public speaking materials, the thematic range of proper names, the presence of elements of other forms and styles of speech. S. are taken up. The analysis explores the linguistic bases, imagery and figures of speech of Silva Kaputikyan's public speaking style.

Keywords and phrases: Silva Kaputikyan, public speaking, text, style, vocabulary, accretion of verbs, metaphor, catch phrases.

**ЯЗЫК ПУБЛИЦИСТИКИ СИЛЬВЫ КАПУТИКЯН "НЕ МОГУ
МОЛЧАТЬ"**

АШОТ ГАЛСТЯН

Д. филол. н.

ash.galstyan@mail.ru

ЭМИН МАЛХАСЯН

Преподаватель армянского языка и литературы

средней школы N 108 г. Еревана

Аннотация

Публицистика Сильвы Капутикян "Не могу молчать" – цикл статей, телевизионных выступлений и интервью, в котором автор представляет свои размышления об имении достойного настоящего и будущего.

Нашей целью, безусловно, не является лишь анализ социально-политической ситуации в период жизни поэтессы, описание событий, предшествующих и последующих за явлениями. Полезно синхронного угла зрения выявить языковые

характеристики структур и единиц, присущих публицистическому стилю, языковые элементы описания ситуаций. В этом плане проявляются интересные явления также в словарном составе.

В статье обращено внимание на построение публицистического материала, тематические проявления собственных имен, наличие элементов других стилей. Выявляются языковые основы публицистического стиля С. Капутикян, описательные и выразительные средства.

Ключевые слова и словосочетания: Сильва Капутикян, публицистика, текст, стиль, словарный состав, скопление глаголов, метафора, крылатое выражение.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամենայն հայոց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի ստեղծագործությունների գունապնակում զգալի կշիռ ունի հրապարակախոսությունը: 1979թ. լույս է տեսել հեղինակի «Իմ ժամանակը» հրապարակագրությունների և ուղեգրությունների ժողովածուն: 1992թ. սեղանին դրվեց «Էջեր փակ գգրոցներից» հրապարակագրությունը, իսկ 2000-ին՝ «Չեմ կարող լռել» խորագրով հոդվածներն ու ելույթները:

Ս. Կապուտիկյանի հրապարակագրությունը, որն ըստ էության ունի ներգործման գործառույթ, լոկ հեղինակի անհատականության արտահայտությունը չէ, այլ նաև ժամանակաշրջանի համապատկերի նկարագրություն է, այդ շնչահատ տարիների հասարակության ապրածն ու զգացածը, հույսերն ու հուսաբեկությունները: Հոդվածից հոդված հրապարակախոսի ձայնը դառնում էր առավել խիստ, ավելի փոթորկուն, քանզի այն կյանք էլ, որ ապրում էր բանաստեղծուհին, ավելի ակեղծ էր ու ծանր:

Այս ամենն ըստ էության ներկայացվում է հրապարակախոսական ոճի բազմազան դրսևորումներով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածի ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական հիմքն են հանդիսացել լեզվաբանների և ոճագետների՝ թեմային առնչվող աշխատանքները:

Հիմնախնդիրը լուծելու նպատակով առաջնորդվել ենք լեզվաբանության և տրամաբանության մեջ տարածում գտած մի շարք մեթոդներով և մոտեցումներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հրապարակախոսական ոճը օգտագործվում է տեղեկույթը հանրային ոլորտներին իրազեկելու համար: Հրապարակախոսական ոճն առկա է հեռուստատեսություններում, տարատեսակ հանդիպումներում և հասարակական հնչեղություն ունեցող հոդվածներում: Այս դեպքում ոչ միայն տեղեկատվություն է հաղորդվում, այլև այդ ամենը ներագրում է ունկնդիրների հուզականային ոլորտների վրա, նրան որոշակի դիրքորոշման մղում:

Տեքստի կառուցվածքային հիմնաբաղադրամասերից է սկզբնամասը: Ունկնդրի ուշադրությունն անմիջապես գրավելու համար ներկայացվում են իրողություններ, փաստեր, որոնք հրապարակախոսի բանականությամբ ըմբռնված-ապրված են և կրում են հեղինակի ստեղծագործական անհատականության կնիքը: Հեղինակն անմիջապես անցնում է բուն նյութին, և ընթերցողը հայտնվում է նկարագրվող իրադարձության և թեմայի տիրույթում. «Չգիտեմ հատկապես ե՞րբ, Հայրենական պատերազմի սկզբի՞ց, թե՛ նրանից առաջ, Հովհաննես Բաղրամյանի անունն իր ողջ ուժգնությամբ ու արձագանքումներով մտել է իմ ընկալումների մեջ, դարձել իմ հոգին ջերմացնող, հպարտությամբ ու հիացմունքով լցնող անուններից մեկը» [3, 6]:

Այս դեպքում հրապարակախոսը, ներգործելով ընթերցողի հուզական ազդակների վրա, նկարագրվող անձի կամ երևույթի նկատմամբ որոշակի մտորումներ է առաջացնում:

Այսպիսի ուսումնասիրությունների դեպքում նպատակային է բառապաշարի շերտերի առանձնացումը: Ուսումնասիրվող տեքստի բառապաշարն աչքի է ընկնում հատկանունների առատությամբ: Գրողների և արվեստագետների անուններ՝ Վիլյամ Սարոյան, Մարտիրոս Սարյան, Սուրեն Բոջարյան, Հենրիկ Մալյան, Լուսինե Զաքարյան, Պարույր Սևակ, Վահագն Դավթյան, Բելա Ախմադովինա, Մուսրեպով (ղազախ գրող), գիտնականների, քաղաքական գործիչների և զորահրամանատարների անուններ՝ Վիկտոր Համբարձումյան, Վարդան Մամիկոնյան, Անաստաս Միկոյան, Հովհաննես Բաղրամյան, Համազասպ Բաբաջանյան, Մոնթե Մելքոնյան, Քլինթոն, պետությունների, քաղաքների և փողոցների անուններ՝ Իրան, Տաջիկստան, Փարիզ, Նյու Յորք, Բոստոն, Վան, Բիթլիս, Կարին, Կարս, Մոսկվա, Չարենցավան, Սիվցև-Վրաժեկ (փողոցի անուն):

Տեղանունները օժտված են հարուստ բովանդակությամբ և տեղեկատվական մեծ լիցքով: Իբրև բառային նշան՝ դրանք առաջին մակարդակում սերտ հարաբերվում են անձնանվանը, սակայն իրականում այս երկու հատկանունների միջև զգալի տարբերություն կա:

Հրապարակախոսության լեզվում թափանցել են օտար բառեր՝ կոնգրես (32) (պետությունների ղեկավարների կամ նրանց դեսպանների ժողով, որ քննում և վճռում է քաղաքական խնդիրներ, ֆրանսերեն ռուսերենի միջնորդությամբ), հոթել (հյուրանոց) (21), պրեստիժ (հեղինակություն) (21), լեդի (ամուսնացած կին Անգլիայում, անգլերեն) (29), օֆիս (36) (գրասենյակ, անգլերեն), կոլեկցիոներ (40) (կոլեկցիաներ հավաքող, ֆրանսերեն՝ ռուսերենի միջնորդությամբ), բանկետ (12) (հրապարակային հանդիսավոր ճաշ, ֆրանսերեն՝ ռուսերենի միջնորդությամբ), ղալմաղալ (20) (արաբերեն, աղմուկ-աղաղակ, շփոթություն), Պէն-կլուբ (Պէն-ը կազմված է պոեզիա, էսսե, նովել բառերի սկզնատառերից, սկզբնապես հիմնվել է Լոնդոնում մոտ հարյուր տարի առաջ) և այլն: Գործածված են նաև օտարագիր բառեր. «Շատ ավելի տպավորիչ էր այն հյուրասիրությունը, որը հանձն էր առել «VIKING LINE» ծովային ճամփորդության ֆինն-շվեդական ընկերությունը» [3, 42] և այլն:

Ակտիվ են հայ, բարձր, սուգ սկզբնաբաղադրիչով, ինչպես նաև պետ, հանդես, տուն վերջնաբաղադրիչով միավորները՝ հայապաշտ (82), հայաշխարհ (87), հայապահպան (86), բարձրաոճ, բարձրամեծար (7), սգերթ (49), սեղանապետ (10) պարահանդես (24), սգահանդես (54) գրատուն (44), սգատուն (79), աղոթատուն (86) և այլն:

Հետաքրքրական զուգորդումներ կան բայերի արտահայտչական ձևերում: Ս. Կապուտիկյանը, բնութագրելով Հ. Բաղրամյանին, գործածում է բայ-բնութագրիչներ. «Հ. Բաղրամյանը մշտապես մնաց իր փառքի ալիքի վրա, մեծարվեց, սիրվեց, լիացավ, վայելեց» [3, 14]: Բայերի կուտակման ոճական այս հնարքը ոճագիտության մեջ կոչվում է համակուտակում, որը գեղարվեստական վավերագրության լեզվում կիրառվում է մտքի յուրովի թվարկման, գործողության ուժգնության ընդգծման նպատակով: Պ. Պողոսյանը նշում է, որ համակուտակումը այնպիսի գաղափարների յուրօրինակ թվարկում է, որոնք միասնաբար թողնում են շատի և ուժեղի տպավորություն [5, 7]: Համակուտակման շղթայի որոշ բայեր կարող են հոմանշային շարքեր կազմել:

Խոսքի պատկերավորությունը և արտահայտչականությունը հրապարակախոսի զենքերից են: Հրապարակախոսության լեզուն բնորոշվում է փոխաբերության՝ որպես ոճական դարձույթի գործածության յուրահատկությունների ամենաբազմազան դրսևորումներով: Դրանք հեղինակային ինքնատիպ հյուսվածքներ են, լեզվական գրավիչ կառույցներ: Փոխաբերությունը հնարավորություն է տալիս նմանությամբ, առնչակցությամբ համեմատություն կատարել, վեր հանել տարբեր առարկաների, երևույթների կապերը և դրանով իսկ խոսքը դարձնել առավել տպավորիչ [1, 8]. «Գնանք մեր ղեկավարների առաջ մոմ վառենք, որ մինչև հիմա ազատ խոսքի համար ոչ մի գրող բանտ չի ընկել» [3, 31]: «Իր ջերմությամբ, աչքերի տաք ուրախությամբ «հայի համ» տվեց մի ֆիննուհի» [3, 34]:

Համեմատությունը հրապարակախոսության հատկանիշներից է: Բնագրի տարբեր կառույցներում հեղինակը հաճախ է համեմատության եզրեր գտնում. «Չարենցն էր մեծ, այնքան էր մեծ, որ կարծես չէր տեղավորվում հետզհետե շագրենակաշվի նման փոքրացած Հայաստանում» [3, 76]: «Արտաշես արքայի պես մեզ թողեց միայն ավերակների վրա թագավորելու բախտը» [3, 77]: «Կույրի պես գնում է իրեն մոլորեցնողի հետևից» [3, 32] և այլն:

Հրապարակախոսության մեջ կարող են լինել գիտական ոճի հոսքեր. «Հայաստանը պոեզիայի հինավուրց երկիր է, դեռևս X դարում մենք ունեցել ենք հանճարեղ մի ճգնավոր՝ Գրիգոր Նարեկացի: Վալերի Բրյուսովը մեր միջնադարյան պոեզիան համարում էր մարդկության ամենաբարձր նվաճումներից մեկը» [3, 29-30]:

Հրապարակախոսական ոճն իր բնույթով տարբերվում է գեղարվեստական հրապարակախոսության կամ, ինչպես ընդունված է ասել, «բաց տեքստի» գրականությունից, բայց և դրանք կարող են ունենալ ընդհանուր կողմեր [4, 49]: Ս. Կապուտիկյանի հուշագրական արձակի որոշ դրսևորումներ նկատելի են հրապարակախոսական էջերում: Աչքի են զարնում բնորդի արտաքին նկարագրությունը, լրացուցիչ մանրամասներ. «Դռների մոտ մեզ ողջունեց բարեդեմ մի տիկին, բարալիկ ու գեղանի, ճաշակավոր հագուստ-կապուստով, բայց ոտաբոբիկ: Ասացին, որ իրավաբան է, ունի իր օֆիսը և իր գործերում շատ հաջողակ է» [3, 36]:

Այս համապատկերում նկատելի է նաև *հիշել* բայի ձևաիմաստային դրսևորումը. «Հիշում եմ մի այսպիսի հանդիպում Անահիտի տանը» [3, 15]:

Այս ոճի տեքստն ունի բացատրական բառարանի գործաբանական արժեք. Մեկնաբանվում են տարբեր հասկացություններ, բառեր, տրվում են բացատրություններ. «Աշխարհում տարածված է Ֆինլանդիային վերաբերող երկու հանրահայտ հասկացություն՝ ֆիննական դանակ և ֆիննական տնակ» [3, 35]: Տեքստի տրամաբանական կամրջակը սնող այսպիսի հոսքերը ամբողջական են դարձնում հրապարակախոսական ոճի դրսևորումները:

Ս. Կապուտիկյանը երբեմն այլ գրողների մտային հոսքերով է ամբողջացնում հրապարակախոսական բնագիրը. «Ինչպես Սևակն է ասում՝ «խնդրելով պահանջեց, պահանջելով խնդրեց» [3, 18]: «Սակայն մեծ Թումանյանը ասում է. «Ուրիշի վատությունը շատ էլ վտանգավոր բան չի լավ մարդու համար» » [3, 147]: «Այս հանգամանքը լավ է հասկացել իտալացի գրող Ալբերտո Մորավիան, որ գրել է, թե հայի համար կոնյակը սոսկ արտադրատեսակ չէ, այլ ազգային հպարտության առարկա, հարազատ հողի, ջրի և արևի ավյունը իր մեջ կրող էլիքսիր, ուրիշ ժողովուրդներին ներկայանալու այցետուս» [3, 24]:

Առկա են նաև թևավոր խոսքեր հիշեցնող նախադասություններ. «Անունը կար, ամանումը չկար» [3, 42], «Մերն ուրիշ է» [3, 32], «Պատերազմը կանացի դեմք չունի» [3, 33], «Ճամփորդական նավից՝ ուղղակի պարահանդես» [3, 24], «Որտեղ հաց, այնտեղ կաց» (գրողն անվանում է արատավոր կենսափիլիսոփայություն) [3, 90]: «Թշնամին դարպասների մոտ է» [3, 98], «Ասում են՝ հանգուցյալի ետևից կամ միայն լավն են խոսում կամ լռում են» [3, 58]:

Գործածված են նաև շրջասական նոր կապակցություններ՝ դարերի երկունք ապրած նորամանուկ-Հայաստան (93), արծվաթռիչ բանաստեղծ-Չարենց (81), հայապաշտ հեղինակ-Չարենց (82), հայրենի բանաստեղծուհի-Սիլվա Կապուտիկյան (96), Չանգեզուրի զանգը-Սերո Խանզադյան (58), աստվածատուր երգչուհի-Լուսինե Զաքարյան (50) և այլն:

Էական է տեքստի վերջաբանը, որը հայտնի ճշմարտությամբ է ամրագրված. «Այո՛, մեր միակ փրկությունը մեր հավաքական ուժի մեջ է ու նաև մեր հոգեկանության, նաև մեր արարիչ ոգու մեջ»:

Հավաքենք մեր աշխարհացրիվ ուժերը, մեր արարիչ ոգին՝ ապրելը շարունակելու համար» [3, 83]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ս. Կապուտիկյանի հրապարակախոսությունն աչքի է ընկնում որոշակի բառափնջերի դրսևորմամբ՝ հատուկ անուններ, օտարաբանություններ, շրջասույթներ, բարդության սկզբնաբաղադրիչի և վերջնաբաղադրիչի ակտիվություն ունեցող միավորներ և այլն:

2. Հետաքրքրական զուգորդումներ կան բայերի արտահայտչաձևերում. Համակուտակումը որոշակի ոճավորում է ստեղծում:

3. Հրապարակախոսության լեզուն աչքի է ընկնում պատկերավոր և արտահայտչական ձևերի ակտիվությամբ:

4. Հրապարակախոսական արձակում առկա են միջոճային բնութագրիչների փոխանցումներ:

5. Հոդվածների որոշ հոսքեր ունեն հարցուպատասխանական կառուցվածք:

Գրականության ցանկ

1. Բաբայան Օ., Փոխաբերությունը արդի հայերենում, Ե., 2004:
2. Գալստյան Ա., Երկխոսությունը ժամանակակից հայերենում, Ե., 2003:
3. Կապուտիկյան Ս., Չեմ կարող լռել (հրապարակախոսություն), Ե., 2000:
4. Շալունց Ռ., Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Ե., 1987:
5. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2-րդ, Ե., 1991: